# 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԺԾԾ ԵՎ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ

## ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

# 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀՀ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

**Պետական մարմինը՝** *<ՀՀ Ազգային ժողով>*

**Հայտի հաստատման ամսաթիվը՝** *<03 մարտի 2026 թվական>*

## 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

*Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական կառավարման երկիր է, և Ազգային ժողովը ոչ միայն ժողովրդի ներկայացուցչական մարմինն ու Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունն է, այլև օժտված է իրականացնելու սահմանադրությամբ իրեն վերապահված գործադիր իշխանության գործունեության վերահսկողական գործառույթ: Որպես լեգիտիմ և ժողովրդավար խորհրդարան՝ Ազգային ժողովը ձգտում է հնարավորինս բաց և թափանցիկ լինել հանրության առջև՝ ապահովելով ՀՀ-ում արդյունավետ օրենսդրական դաշտ:*

*ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմն իր կառուցվածքով և գործառույթներով ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրականացնում է ՀՀ Ազգային ժողովի և նրա մարմինների լիազորությունների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական սպասարկումը, այդ թվում՝ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող նախագծերի կամ այլ փաստաթղթերի ձևակերպմանն ուղղված մասնագիտական աջակցությունը, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովումը:*

*ՀՀ Ազգային ժողովը գործում է Սահմանադրությանը և իր Կանոնակարգ օրենքին համապատասխան՝ ձևավորելով և կատարելագործելով օրենսդրական դաշտը:*

***ՀՀ Ազգային ժողովի միջնաժամկետ նպատակներն են՝***

1. ***Հանրության կողմից Ազգային ժողովի և նրա աշխատակազմի գործառույթների հստակ ընկալում, հանրության վստահության ձեռք բերում և ամրապնդում: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝***

- *Իրականացնել ՀՀ ԱԺ դերի բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ ամրապնդելով խորհրդարանի և հանրության կապը,*
- *Ապահովել Ազգային ժողովի և աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ հաշվետվողականությունը, ընկալելի ձևով ներկայացնելով դրանց վերջնական արդյունքը,*
- *Ազգային ժողովի նախագահին, պատգամավորներին, աշխատակազմին դիմաց անձանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի ցուցաբերում, արագ արձագանքում և հետևողականության դրսևորում,*

2. ՀՀ և այլ երկրների, ՀՀ և սփյուռքի միջև Ազգային ժողովի առանձնահատուկ դերի ստանձնում: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- Միջազգային խորհրդարանական կազմակերպությունների ներգրավմամբ համաշխարհային հարթակներում իրականացնել հայկական պատմամշակութային ժառանգության և արժեքների պահպանման և ճանաչման ուղղված միջոցառումներ,
- Հանդես գալ երկրի զարգացմանն ուղղված նոր գաղափարների և ռազմավարական ծրագրերի հայեցակարգերի մշակմամբ,
- Կազմակերպել Հայաստանի ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ հյուրընկալելով միջազգային հեղինակավոր միջոցառումների:

3. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի դիրքավորումը որպես ցանկալի աշխատավայր: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- ՀՀ ԱԺ աշխատակազմը դարձնել հրապուրիչ աշխատավայր՝ աշխատակցի համար ապահովելով վերապատրաստման, առաջխաղացման և գնահատման անհրաժեշտ մեխանիզմներ,
- Ապահովել աշխատակցի հարմարավետության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ,

4. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ներուժի արդյունավետ իրացում: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- բարձրացնել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական ներուժը խորհրդարանական վերահսկողության ոլորտում,
- իրականացնել ՀՀ ԱԺ աշխատակազմի կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների՝ այդ թվում այլ երկրների խորհրդարանների աշխատակազմերի հետ համագործակցության հաստատում և գործող կապերի խորացում,

- *իրականացնել ՀՀ Ազգային ժողովի տեխնիկական հագեցվածության, շենքային պայմանների բարելավման աշխատանքներ:*

| Նպատակը | Ծրագրի դասիչը | Ծրագրի անվանումը | Ծրագրի վերջնական արդյունքները | | | | | Կապը ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ գործող այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված ՀՀ կառավարության քաղաքականության նպատակների և թիրախների հետ[1] | Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Չափորոշիչը | Ելակետը | | Թիրախը | | | |
| | | | | Ցուցանիշը | Ժամկետը | Ցուցանիշը | Ժամկետը | | |
| Օրենսդրական դաշտի ձևավորում և կատարելագործում | 1024 | ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում | ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ Ազգային ժողովին վերապահված լիազորությունների իրականացման ապահովում, տոկոս | | | 100 | 2027 | 6. Ինստիտուցիոնալ զարգացում, 6.10 Պետական ծախսեր | 10.4,17.14, 17.7 |

ՀՀ Ազգային ժողովն Օրենսդրական դաշտի ձևավորման և կատարելագործման նպատակով Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացման արդյունքում առնչվում է ՄԱԿ-ի կայուն զարգացման ծրագրի մի քանի ցուցանիշների հետ, մասնավորապես.

10.4 / աշխատավարձերի հավասարություն և սոցիալական պաշտպանություն/ ՀՀ Ազգային ժողովն իրականացնում է այնպիսի քաղաքականություն, որն ուղղված է քաղաքացու սոցիալական պաշտպանվածությանը և օգնում է աստիճանաբար հասնել աշխատավարձերի հավասարության առավել բարձր մակարդակի:

17.7 /բնապահպանորեն անվտանգ տեխնոլոգիաների զարգացումը/ ԱԺ աշխատակազմի որդեգրած քաղաքականությունն ուղղված է այնպիսի տեխնիկական հագեցվածության ապահովման և տեխնոլոգիաների օգտագործմանը, որոնք անվտանգ են բնության համար (տրանսպորտային պարկի համալրում էլեկտրոմոբիլներով):

17.14 /Քաղաքականության փոխշաղկապվածությունը հանուն կայուն զարգացման/ Սահմանադրությամբ Ազգային ժողովին վերապահված

լիազորությունների իրականացումը միտված է համակարգային հարցերի լուծման համատեքստում քաղաքական և ինստիտուցիոնալ փոխշաղկապակցվածությանը ու կայուն զարգացմանը:

## 2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

*Ներկայացնում ենք ոլորտային քաղաքականության նպատակների և թիրախների ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում Ազգային ժողովի կողմից իրականացվող հիմնական ծախսային ուղղությունները և դրանց գերակայությունները/առաջնահերթությունները (Ազգային ժողովը ՀՀ կառավարության ոլորտային քաղաքականություն չի իրականացնում):*

| Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման) | Հիմնավորումներ |
|---|---|
| ՀՀ Ազգային ժողովին վերապահված լիազորությունների իրականացման, Օրենսդրական դաշտի ձևավորում և կատարելագործում | ՀՀ Սահմանադրությամբ ԱԺ-ին վերապահված լիազորությունների իրականացում |
| Փորձագիտական ներուժի հրացման պայմանների ապահովում | ՀՀ Սահմանադրությամբ ԱԺ-ին վերապահված լիազորությունների իրականացում |
| Շենքային և աշխատանքային պայմանների ապահովում՝ բնականոն գործունեության համար 2027թ արդիականացման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում, Այցելուների կենտրոնի կառուցում | ՀՀ Սահմանադրությամբ ԱԺ-ին վերապահված լիազորությունների իրականացում |

## 3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### 3.1. Գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ և բազային բյուջեի գնահատում

*ՀՀ Ազգային ժողովի «ՀՀ 2026թ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ծախսային պարտավորությունները 1024 «ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում» ծախսային ծրագրի մասով կազմում է ընդամենը 7,03,612.6 հազ․դրամ՝ որից ըստ ծախսային միջոցառումների*

- *«ՀՀ Ազգային ժողովի գործունեության ապահովում, օրենսդրական, վերահսկողական և ներկայացուցչական ծառայություններ 6,163,087. 6 հազ. դրամ*
- *«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստում» 1,309. 2 հազ. դրամ,*
- *«ՀՀ ԱԺ դերի բարձրացման ուղղված միջոցառումներ» 168,765. 0 հազ. դրամ,*
- *«Միջազգային խորհրդարանական կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ» 149,717.1 հազ. դրամ*

- *«Աջակցություն կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին» 520,733. 7 հազ. դրամ:*

## 3.2. Նոր նախաձեռնություններ

*ՀՀ Ազգային ժողովը նոր նախաձեռնություններ չունի:*

## 3.3. Պարտադիր և հայեցողական ծախսերը

| Դասիչը | | Միջոցառման անվանումը | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | | | | |
| Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| 1024 | 11001 | ՀՀ ԱԺ գործունեության ապահովում, օրենսդրական, վերլուծական և ներկայացուցչական ծառայություններ | | | ՀՀ Սահմանադրություն, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք |
| | 11002 | ՀՀ ԱԺ աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստում | | | «ՀՀ ԱԺ Պետական ծառայության մասին» օրենք |
| | 12001 | Միջազգային խորհրդարանական կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ | | | Միջազգային պայմանագրեր |
| | *12002* | Աջակցություն կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին | | | «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք |
| Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| 1024 | 11003 | ՀՀ ԱԺ դերի բարձրացման ուղղված միջոցառումներ | | | «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք |
| | 31001 | ՀՀ Ազգային ժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում | | | ՀՀ Սահմանադրություն, «Ազգային ժողովի կանոնակարգ» |
| | 31003 | ՀՀ Ազգային ժողովի շենքային պայմանների բարելավում | | | ՀՀ Սահմանադրություն, «Ազգային ժողովի կանոնակարգ» |
| Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| | | | | | |

## 3.4 Ծախսերի այլընտրանքային սցենարները

*2027թ․ բյուջետային հայտով ներկայացվել է ՀՀ ԱԺ բնականոն գործնեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը, ուստի այլընտրանքային սցենարների մշակումը համարում ենք ոչ նպատակահարմար:*

## 4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

*ՀՀ Ազգային ժողովը ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտներ չունի:*

## 5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*ՀՀ Ազգային ժողովը տարածքային զարգացման առնչվող ծրագրեր չի իրականացնում:*

## 6. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*ՀՀ Ազգային ժողովը միջոլորտային (խաչվող) բնույթի առանձին քաղաքականություններին առնչվող միջոցառումներ չի իրականացնում:*

## 7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*ՀՀ Ազգային ժողովը արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջե ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը/միջոցառումները չունի:*

## 8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

*ՀՀ Ազգային ժողովը 2027-2029թթ ընթացքում իրականացնելու է 1024 «ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում» ծախսային ծրագիրը, որի համար նախատեսվում է․*

*2027 թվականի համար 7,937,834.7 հազ․ դրամ,*

*2028 թվականի համար 7,845,503.1 հազ․ դրամ,*

*2029 թվականի համար 7,863,157.7 հազ․ դրամ:*

## 9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

*ՀՀ Ազգային ժողովը չի տեսնում հայտի հետ կապված ռիսկեր, որոնք կարող են բացասաբար ազդել հայտով ներկայացված նպատակների և արդյունքների վրա:*